**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ ԹԻՎ 1**

**25.12.2025Թ. ԿՆՔՎԱԾ N «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-5» ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ք. Չարենցավան «26» 01 2026թ.

Չարենցավանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Հ. Կ. Շահգալդյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Գնորդ 1»), մի կողմից, և «ՄԻԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Գրիգորյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ «Վաճառող»), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, հիմք ընդունելով 25.12.2025թ. կնքված N «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-5» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.1.1-րդ, 8.5-րդ, 8.15-րդ կետերը և այն հանգամանքը, որ փոփոխությունը չի դասվում ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 56-րդ կետով սահմանված արհեստական փոփոխությունների շարքին, կնքեցին սույն համաձայնագիրը հետևալի մասին:

**1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

Հետագա համագործակցության նպատակով՝ Կողմերը որոշեցին՝

1.1 Սույն համաձայնագրով նախատեսված «Գնորդ 1»-ի իրավունքներն ու պարտականությունները գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով վերապահվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Հրաշք» մսուր մանկապարտեզ համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը (այսուհետ՝ «Գնորդ 2»):

1.2 Հաստատել գնման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի (Հավելված 1-ը կցվում է):

1.3 Հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը (վճարման ժամանակացույց)՝ համաձայն կից հավելվածի (Հավելված 2-ը կցվում է):

1.4 Ապրանքը համաձայնագրով սահմանված ժամկետում «Վաճառող»-ի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 2 (երկու) օրից ավելի:

1.5 «Վաճառող»-ի կողմից համաձայնագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք, որը չի կարող փոխարինվել «Գնորդ 2»-ի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 2 (երկու) օրից ավելի:

1.6 Համաձայնագրի գինը կազմում է 706427.5 (յոթ հարյուր վեց հազար չորս հարյուր քսանյոթ դրամ հիսուն լումա) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն:

Համաձայնագրի գինը ներառում է համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով «Վաճառող»-ի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և «Վաճառող»-ն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ «Գնորդ 2»-ը նվազեցնելու այդ գինը:

1.7 «Գնորդ 2»-ն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները «Վաճառող»-ի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ համաձայնագրի վճարման ժամանակացույցով նախատեսված ամիսներին, 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

1.8 Մատակարարված ապրանքն ընդունվում է «Գնորդ 2»-ի և «Վաճառող»-ի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը «Գնորդ 2»-ին հանձնելու փաստը ֆիքսվում է «Գնորդ 2»-ի և «Վաճառող»-ի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև համաձայնագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ «Վաճառող»-ը «Գնորդ 2»-ին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը «Գնորդ 2»-ին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված 3):

1.9 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է համաձայնագրի պայմաններին: Հակառակ դեպքում համաձայնագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և «Գնորդ 2»-ը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար համաձայնագրով նախատեսված միջոցները.

բ) «Վաճառող»-ի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

1.10 «Գնորդ 2»-ը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում «Վաճառող»-ին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

1.11 Եթե համաձայնագրի 1.10 կետով սահմանված ժամկետում «Գնորդ 2»-ը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և համաձայնագրի 1.10 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը «Գնորդ 2»-ը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագրում Կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն Համաձայնագիրը և հավելվածները կազմված են 4 (չորս) էջից, կնքվում են հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| «ԳՆՈՐԴ 1» | «ԳՆՈՐԴ 2» | «ՎԱՃԱՌՈՂ» |
|---|---|---|
| **Չարենցավանի համայնքապետարան<br>ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1<br>ՀՀ ՖՆ ԳՎ<br>Հ/Հ 900132111023<br>ՀՎՀՀ 03022497** | **ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Հրաշք» մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ<br>ք. Չարենցավան 6-րդ թաղամաս 1-ին փողոց թիվ 1<br>«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ<br>Հ/Հ 220435140011000<br>ՀՎՀՀ 02805678** | **«ՄԻԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ<br>ք. Երևան, Խորենացի 60/1<br>«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ<br>Հ/Հ 1570098160650100<br>ՀՎՀՀ 04244144<br>էլ. հասցեն hsargsyan.87@mail.ru<br>հեռ. (+37499) 75-77-00** |
| **Համայնքի ղեկավար՝<br>Հ. Կ. Շահգալդյան** | **Տնօրեն՝ Կ. Խեչոյան** | **Տնօրեն՝ Ա. Գրիգորյան** |
| **(ստորագրությունը)<br>Կ.Տ** | **(ստորագրությունը)<br>Կ.Տ** | **(ստորագրությունը)<br>Կ.Տ** |

Հավելված N-1
25.12.2025թ. կնքված «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-5» ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
«26» 01 2026թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

## ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| Ապրանքի | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | չափման միավորը | միավոր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատակարարման | | |
| | | | | | | | հասցեն | ենթակա քանակը | ժամկետը |
| 59 | 15111110/501 | Տավարի միս, ոսկրոտ | կգ | 2518.51 | 629627.5 | 250 | ք. Չարենցավան 6-րդ թաղամաս 1-ին փողոց թիվ 1 | 250 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |
| 60 | 15131631/501 | Տավարի մսի պահածո | կգ | 1920 | 76800 | 40 | ք. Չարենցավան 6-րդ թաղամաս 1-ին փողոց թիվ 1 | 40 | 2026 թվականի հունվար-դեկտեմբեր ամիսներ |

**«ԳՆՈՐԴ 1»**
**Չարենցավանի համայնքապետարան**
**ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1**
**ՀՀ ՖՆ ԳՎ**
**Հ/Հ 900132111023**
**ՀՎՀՀ 03022497**

**Համայնքի ղեկավար՝**
**Հ. Կ. Շահգալդյան**

(ստորագրությունը)
Կ.Տ

**«ԳՆՈՐԴ 2»**
**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Հրաշք» մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ**
**ք. Չարենցավան 6-րդ թաղամաս 1-ին փողոց թիվ 1**
**«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ**
**Հ/Հ 220435140011000**
**ՀՎՀՀ 02805678**

**Տնօրեն՝ Կ. Խեդոյան**

(ստորագրությունը)
Կ.Տ

**«ՎԱՃԱՌՈՂ»**
**«ՄԻԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**
**ք. Երևան, Խորենացի 60/1**
**«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ**
**Հ/Հ 1570098160650100**
**ՀՎՀՀ 04244144**
**էլ. հասցեն hsargsyan.87@mail.ru**
**հեռ. (+37499) 75-77-00**

**Տնօրեն՝ Ա. Գրիգորյան**

(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված N 2
25.12.2025թ. կնքված «ՉՀ-ԷԱՃԱՊՁԲ-2026/1-5» ծածկագրով
պայմանագրում փոփոխություններ կատարելու նպատակով
«26» 01 20 26թ. կնքված թիվ 1 համաձայնագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | Ապրանքի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026 թվականին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| 59 | 15111110/501 | Տավարի միս, ոսկրոտ | 629627.5 | 629627.5 | 629627.5 | 629627.5 | 629627.5 | 629627.5 | 629627.5 | 629627.5 | 629627.5 | 629627.5 | 629627.5 | 629627.5 | 629627.5 |
| 60 | 15131631/501 | Տավարի մսի պահածո | 76800 | 76800 | 76800 | 76800 | 76800 | 76800 | 76800 | 76800 | 76800 | 76800 | 76800 | 76800 | 76800 |

*Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով՝ ըստ փաստացի մատակարարված խմբաքանակների:

**«ԳՆՈՐԴ 1»**
**Չարենցավանի համայնքապետարան**
**ք. Չարենցավան Կ. Դեմիրճյան հրապարակ թիվ 1**
**ՀՀ ՖՆ ԳՎ**
**Հ/Հ 900132111023**
**ՀՎՀՀ 03022497**

**Համայնքի ղեկավար՝ Հ. Կ. Շահգալդյան**

(ստորագրությունը)
Կ.Տ

**«ԳՆՈՐԴ 2»**
**ՀՀ Կոտայքի մարզի Չարենցավան համայնքի Չարենցավան քաղաքի «Հրաշք» մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ**
**ք. Չարենցավան 6-րդ թաղամաս 1-ին փողոց թիվ 1**
**«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ**
**Հ/Հ 220435140011000**
**ՀՎՀՀ 02805678**

**Տնօրեն՝ Կ. Խեղոյան**

(ստորագրությունը)
Կ.Տ

**«ՎԱՃԱՌՈՂ»**
**«ՄԻԹ ԳՐՈՒՊ» ՍՊԸ**
**ք. Երևան, Խորենացի 60/1**
**«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ**
**Հ/Հ 1570098160650100**
**ՀՎՀՀ 04244144**
**էլ. հասցեն hsargsyan.87@mail.ru**
**հեռ. (+37499) 75-77-00**

**Տնօրեն՝ Ա. Գրիգորյան**

(ստորագրությունը)
Կ.Տ